# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում տեխնոլոգիայի ուսուցչի /6 դասաժամ,տղաների և աղջիկների  խումբ,ֆիզկուլտուրա 10 դասաժամ,ռուսաց լեզու 27 դասաժամ, քիմիա 15 դասաժամ/ , հայոց լեզու 5 դասաժամ,գրականություն 2 դասաժամ,կենսաբանություն 2 դասաժամ,կերպարվեստ 2 դասաժամ թափուր աշխատատեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է  հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է  ներկայացնել՝

. դիմում(Ձև 1) , մեկ լուսանկար 3 x 4 չափսի,
. բարձրագույն կրթությամ մասին փաստաթուղթ (դիպլոմ), .
անձը հաստատող փաստաթուղթ,
. «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26 –րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,»
. ինքնակենսագրություն  (Ձև 4) ,
. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
. .Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում ) ,
.  որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ  :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի  բնօրինակները համեմատում է պատճենների  հետ և բնօրինակները վերադարձնում:  Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են  2022 թվականի օգոստոսի  31-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 13-ը  ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից  17:00,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 16 -ին՝ժամը 15:00-ին Ծակքար գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Ծակքար 1-ին փողոց 16 շենք:
Տեղեկությունների համար զանգահարել  077-01-01-04 հեռախսահամարով: